# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ
# ՔԱՐԱՇԱՄԲ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Քարաշամբ համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, գ.Քարաշամբ, (060)464727, karashamb@mail.ru

**Ո Ր Ո Շ Ո Ւ Մ**

07 ՄԱՐՏԻ 2018թվականի N 8

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔԱՐԱՇԱՄԲ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 14 -րդ հոդվածի պահանջներով

Համայնքի ավագանին որոշում է՝

Հաստատել համայնքի ավագանու 2018 թվականի մարտի 7-ի թիվ 3 հերթական նիստի օրակարգը:

1. Պարտավորություն ստանձնելու մասին:

2.Քարաշամբ համայնքի 2017 թվականի բյուջեի կատարման տարեկան հաշվետվությունը հաստատելու մասին:

3. Քարաշամբի համայնքային սեփականություն համարվող հողատարածքները աճուրդ - վաճարքի միջոցով օտարելու թույտվություն տալու մասին:

Կողմ -4 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԱՎԵՏԻՍՅԱՆ ՎԱՉԻԿ
2. ԵՂԻԱԶԱՐՅԱՆ ԱՐՄԵՆ
3. ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ ԿԱՐՄԵՆ
4. ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ ՄԻՀՐԱՆ

Համայնքի ղեկավար՝ ԶՈՐԻԿ ԽԼՂԱԹՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ
ՔԱՐԱՇԱՄԲ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Քարաշամբ համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, գ.Քարաշամբ, (060)464727, karashamb@mail.ru

**Ո Ր Ո Շ Ու Մ**
07 ՄԱՐՏԻ 2018թվականի N 9

ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆ ՍՏԱՆՁՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության «Տեղական ինքնակառավարման մասին օրենքի 18 -րդ հոդվածի համաձայն, Հայաստանի Հանրապետության Կոտայքի և Գեղարքունիքի մարզերի և, մասնավորապես, Քարաշամբ համայնքի տարածքում աղբահանության հետագա աշխատանքների բարելավմանն ուղղված Կոտայքի և Գեղարքունիքի մարզերի կոշտ թափոնների կառավարման ծրագրի (այսուհետ՝ Ծրագիր)շրջանակներում Հայաստանի Հանրապետության և Վերակառուցման և Զարգացման Եվրոպական Բանկի միջև 05.04.2016 թվականին կնքված վարկային համաձայնագրից (հետագա տեքստում՝ «Վարկային համաձայնագիր») բխող՝ «ԿՈՏԱՅՔԻ և ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ԿԿԹԿ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության իրավունքների իրականացման ու պարտավորությունների կատարումն ապահովելու նպատակով՝

Համայնքի ավագանին որոշում է՝

Պարտավորություն ստանձնել 2020 թվականից մինչև 2030 թվականն ընկած ժամանակատվածում հավասարաչափ մասնաբաժիններով Վարկային համաձայնագրից բխող՝ «ԿՈՏԱՅՔԻ և ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ԿԿԹԿ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության պարտավորությունների կատարմանն ուղղված՝ ենթավարկի հիմնական գումարները, հաշվարկված տոկոսագումարները, հանձնավճարները, վերաձևակերպման վճարումները, այդ թվում Հայաստանի Հանրապետության կողմից 2018-2019 թվականների ընթացքում Վերակառուցման և Զարգացման Եվրոպական Բանկին վճարված գումարների վճարման առումով:

Կողմ -4 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԱՎԵՏԻՍՅԱՆ ՎԱՉԻԿ

2. ԵՂԻԱԶԱՐՅԱՆ ԱՐՄԵՆ

3. ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ ԿԱՐՄԵՆ

4. ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ ՄԻՀՐԱՆ

Համայնքի ղեկավար՝ ԶՈՐԻԿ ԽԼՂԱԹՅԱՆ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ
# ՔԱՐԱՇԱՄԲ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Քարաշամբ համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, գ.Քարաշամբ, (060)464727, karashamb@mail.ru

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

07 ՄԱՐՏԻ 2018թվականի N 10- Ն

### ՔԱՐԱՇԱՄԲ ՀԱՄԱՅՆՔԻ 2017 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՏԱՐԵԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի1-ին մասի 5-րդ կետի պահանջներով՝

Համայնքի ավագանին որոշում՝

Հաստատել համայնքի ղեկավարի կողմից ներկայացված համայնքի 2017 թվականի բյուջեի կատարման տարեկան հաշվետվությունը՝ *համաձայն հավելվածների*:

Կողմ -4 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԱՎԵՏԻՍՅԱՆ ՎԱՉԻԿ
2. ԵՂԻԱԶԱՐՅԱՆ ԱՐՄԵՆ
3. ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ ԿԱՐՄԵՆ
4. ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ ՄԻՀՐԱՆ

**Համայնքի ղեկավար՝** **ԶՈՐԻԿ ԽԼՂԱԹՅԱՆ**

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ
## ՔԱՐԱՇԱՄԲ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Քարաշամբ համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, գ.Քարաշամբ, (060)464727, karashamb@mail.ru

# Ո Ր Ո Շ Ու Մ

07 ՄԱՐՏԻ 2018թվականի N 11

ՔԱՐԱՇԱՄԲԻ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱՐՎՈՂ ՀՈՂԱՏԱՐԱԾՔԸ ԱՃՈՒՐԴ-ՎԱՃԱՌՔԻ ՄԻՋՈՑՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 67 րդ հոդվածի, ,,Տեղական ինքնքկառավարման մասին,,Հայաստանի Հանրապետությա ն օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետի դրույթներով:

Համայնքի ավագանին որոշում է`

Թույլատրել համայնքի ղեկավարին համայնքի սեփականություն համարվող գյուղ ատնտեսական այլ և արոտավայր հողատեսքերը աճուրդ վաճառքի միջոցով օտարել և հաստատել մեկնարկային գինը` համաձայն այսուս ակի:

Կողմ -4 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԱՎԵՏԻՍՅԱՆ ՎԱԶԻԿ
2. ԵՂԻԱԶԱՐՅԱՆ ԱՐՄԵՆ
3. ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ ԿԱՐՄԵՆ
4. ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ ՄԻՀՐԱՆ

**Համայնքի ղեկավար`** ԶՈՐԻԿ ԽԼՂԱԹՅԱՆ

Գյուղատնտեսական նշանակության այլ և արոտվայր  հողերի աճուրդ- վաճառք

| Լոտ | Անվանումը | Գտնվելու վայրը | Ծածկագիրը | Մակերսը հա | Նպատակային նշանակությունը | Հողատեսքը | Մեկնարկային գինը | Սահմանափակումներ |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| 1 | Գյուղատնտեսական այլ հողատեսք | Գ. Քարաշամբ | 07-066-0600-0032 | 0.7401 | գյուղատնտեսական | այլ հողատեսք | 49956 | չկան |
| 2 | Գյուղատնտեսական արոտավայր | Գ. Քարաշամբ | 07-066-0301-0014 | 0.95195 | գյուղատնտեսական | արոտավայր | 64256 | չկան |